# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/35 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **27 մայիսի 2026թ.**

2026թ. մայիսի 8-27-ը ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/35 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Մովսիսյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, |
| Խ. Մելիքսեթյան՝ | Երկրաբանական գիտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի տնօրեն, |
| Մ. Գևորգյան՝ | Երկրաբանական գիտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի կիրառական երկրաֆիզիկայի և գեոմոնիթորինգի լաբորատորիայի վարիչ ժ/պ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Մովսիսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Առաքելյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների և ընթացակարգը կասեցված հայտարարելու մասին:

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 8-ին, ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Անլար հեռաչափական սեյսմիկ գրանցման համակարգ | 69,167,000.00 | 11.05.2026 10:00 | 93,782,800.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան 0014, Ազատության պող. 24/1, +374 55 25 05 69 | sales@teamsystems.am | 00229394 |

2026թ. մայիսի 11-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

«ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է անճշտություն, մասնավորապես վերջինիս կողմից ներկայացված անձի լիազորությունների իրավասությունը հաստատող փաստաթղթերը պահանջում են ճշտում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԿԱՍԵՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 11-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ ՓԲԸ | 93,782,800.00 | 69,167,000.00 | 20% | 83,000,400.00 | 69,167,000.00 | 20% | 83,000,400.00 |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ. մայիսի 14-ին Հանձնաժողովի քարտուղարը նիստը կասեցնելով https://eauction.armeps.am/ համակարգի միջոցով մասնակցին ծանուցեց անհամապատասխանությունների շտկման առաջարկ հետևյալ բովանդակությամբ. «Սույնով տեղեկացնում ենք, որ **ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/35** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են հետևյալ անճշտությունները. «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը հաստատված են մի անձի կողմից, ում նման լիազորություններ վերապահված չեն: Հիմք ընդունելով վերոգրյալը առաջարկում ենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և https://eauction.armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնել շտկված փաստաթղթերը:»:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

«ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով 2026թ. մայիսի 27-ին Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգը հայտարարել կասեցված մինչև ուսումնասիրության ավարտը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. 2026 թվականի ապրիլի 20-ին և ապրիլի 20-ին գնման վերաբերյալ ներկայացվել են հարցումներ, որոնց տրվել են պարզաբանումներ համապատասխանաբար՝ ապրիլի 20-ին և մայիսի 5-ին, իսկ հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Մովսիսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Խ. Մելիքսեթյան ____________

Մ. Գևորգյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ____________